

ՀՀ-ՈՒՍ ԼԵՌՆԱՅԻՆ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Վ.Գ.Մանասյան

ՀՀ-ի լեռնային տարածքի հողային ռեսուրսներն աչքի են ընկնում բարդ ամբողջականությամբ: Ագրոարտադրական նպատակներով դրանց յուրացումը սահմանափակող գործոններ են համարվում մանրատրվագիծ ու անկանոն կառուցվածքը, լեռնալանջերի վրա ու նախալեռներում քարքարոտությունը, տարբեր հզորություններն ու ողողամաշվածության աստիճանը և այլն: Այդ ամբողջը պայմանավորվում է աճեցվող գյուղատնտեսական մշակաբույսերի, պտուղների և խաղողի լրակազմը և ագրոտեխնիկան ու հողաբարելավման եղանակները, մեքենայացման և էլեկտրաֆիկացման միջոցները, հետևաբար՝ գյուղատնտեսության բազմաճյուղայնությունն ընդհանրապես և արդյունավետ տեղաբաշխումն ու գոտիական մասնագիտացումը՝ հատկապես [1]:

Ուստի անհրաժեշտ է մշակել հանրապետության լեռնային տարածքի բնատնտեսական ներուժի ռացիոնալ օգտագործման գիտական հիմունքներ, համակողմանիորեն ուսումնասիրել մարդածին ներգործությունը դրանց էկոհամակարգերի, ագրոարտադրական ռեսուրսների պահպանության և վերարտադրության վրա, մարդու ու լեռնային էկոհամակարգերի միջև այժմ և կանխատեսելի հեռանկարում փոխհարաբերությունների ներդաշնակություն հաստատելու համար բացահայտել ուղիներն ու միջոցները:

Քանի որ լեռնային երկրագործության գիտատեսական հիմքը համարվում է դրանք ձևավորող լեռնային հողերի և գործընթացների մասին ուսմունքը, անհրաժեշտ է մշակել ՀՀ լեռնային հողերի դասակարգում և կանխատեսում, որի հիմքում պետք է ընկած լինեն հանրապետության հողային ծածկի ուղղաձիգ հերթափոխի տարածաժամանակային կառուցվածքը. գետահովիտների ցածրադիր տեղամասեր, նախալեռներ, միջլեռնային գոգավորություններ, սարավանդներ, լեռնալանջեր: Դրանցում են պարփակված ոչ միայն լանդշաֆտի հիմնական բաղադրատարրերի պատճառա-հետևանքային կապերը, այլև ռելիեֆի տարբեր տարրերի վրա կողմնորոշվող լանդշաֆտի մորֆոլոգիական մասերը:

Հանրապետության տիպիկ ցածրադիր, նախալեռնային և լեռնային գոտիներում առաջացել են այնպիսի ագրոէկոլոգիական պայմաններ, որոնցում բուսականության, կենդանիների, միկրոօրգանիզմների, կլիմայի և հողային ծածկի որոշակի համակարգեր են ձևավորվում: Այդ ագրոէկոլոգիական պայմաններից է կախված նաև մարդու գոյությունն ու ագրոարտադրական գործունեությունը: Բնականաբար, նրանց տեսանկյունով էլ պետք է մշակվի գոտիական համակարգային երկրագործություն: Այդ առումով Դ.Պողոսյանը գրել է. «Հողային ռեսուրսների հաշվարկը և որակական բնութագրությունը համարվում են գյուղատնտեսական միջոցառումների ճիշտ շրջանացման գործում վճռական նշանակություն ունեցող, մասնագիտացման հարցերը լուծելու, հողերը ռացիոնալ օգտագործելու և նոր տարածքներ յուրացնելու կարևորագույն ժողովրդատնտեսական խնդիրներից մեկը» [2]:

ՀՀ-ում, օրինակ, գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 2051.0 հազ. հա, որոնք հիմնականում (86%-ը) տեղաբաշխված են 1500-3000 մ բացարձակ բարձրությունների վրա և ըստ տեղանքի թեքությունների կազմում են մինչև 3⁰ 29.4 %-ը (որից վարելահողերը 49.7 %-ը), 3-7⁰ 28.2 %-ը (31.9 %-ը), 7-12⁰ 17.3 (12.6 %-ը) , 12-20⁰ 15.2 % (4.8 %-ը), 20⁰-ից բարձր՝ 9.9⁰% (1.0 %-ը), ինչն էլ համապատասխանաբար պայմանավորում է բուսաբուծության ենթաճյուղերի մասնագիտացումը և թելադրում է երկրագործության յուրահատուկ գոտիական համակարգի մշակման անհրաժեշտությունը: Ուստի լեռնային երկրագործությունը ցածրադիր, նախալեռնային և լեռնային գոտիներում անհրաժեշտ է քննարկել միմյանցից առանձին [3]:

Ցածրադիր գոտին՝ դա ուղղաձիգ գոտիականության համակարգում առաջին աստիճանն է, որտեղ լավ է արտահայտված հորիզոնական-ուղղաձիգ

գոտիականությունը: Հարթեցված մակերևույթի վրա տարածվող ոռոգելի մարգագետնային կիսաանապատային հողերը բացառապես բարենպաստ են երկրագործության համար: Այստեղ առանց որևէ լրացուցիչ ծախսերի կարելի է աճեցվող պտուղների, հատապտուղների և խաղողի ոռոգում և մեծ մասամբ աշխատանքի մեքենայացում ապահովել:

Սովորաբար նախալեռնային գոտի են համարվում լեռների հետ կապված գառիկող թեքություններով լավ ցամաքորոպվորված ավելի ցածր բարձրությունները (մինչև 1500-1600 մ): Բացարձակ բարձրությունների ավելացման արդյունքում խոնավածծության փոփոխությունը՝ բաց օդային հոսանքներով նախալեռնային գոտու տարածքում հողային գոտիների հերթափոխության հիմնական պատճառն է: Դրա հետ կապված նախալեռնային գոտու լեռնային շագանակագույն հողերը թափվող տեղումների պայմաններին համապատասխան գրավում են միջանկյալ դիրք ցածրադիր և լեռնային գոտիների հողերի միջև, որտեղ կուտակումային գործընթացների հետ մեկտեղ դիտվում է նաև տեղատարում:

Նախալեռնային գոտու ագրոկլիմայական պայմաններից կախման մեջ լինելու պատճառով այստեղ երկրագործությունը հակաէրոզիոն ցանքաշրջանառության յուրացման հետ մեկտեղ լինելու է հողապաշտպանական (հողերն ազատել քարերից, խոտացանության միջոցով վերականգնել կառուցվածքը, զարգացնել ոռոգում, կիրառել պարարտացում և այլն): Բացի հողաշերտը շուտ տալու ավանդական գութանավարից նաև տարբեր պետք է լինեն երկրագործության համակարգերը. խոզանի պահպանմամբ հողերի մշակումն առանց մի կողմ շուտ տալու և լանջի լայնակի վարը հարթակտրելու արմատավորմամբ, լայնակի և ուրվագծային վարը, հեռաշարացան մշակաբույսերի միջշարքերի նրբատաշումը, վերջիններիս ցանքատարածություններում խորը շերտաձև փխրեցումը, ողողամաշված հողերի մարգագետնացումը: Տեղանքի թեքության աստիճանների և աճեցվող մշակաբույսերի, պտուղների և խաղողի հողապաշտպան ունակությունների հաշվառմամբ անհրաժեշտ է խիստ տարբերակել հողերի մշակման տեխնոլոգիան, որոնք երեք խմբերի են բաժանվում, հողերը ողողումից լավ պաշտպանող բազմամյա խոտեր, պտղատու այգիներ, ողողումից հողերը միջին չափերով պաշտպանող հասկավոր մշակաբույսեր, միամյա խոտեր ու հատապտուղներ և թույլ հողապաշտպան ունակությունների տիրապետող հեռաշարացան մշակաբույսեր:

Հիմնականում լայնակի ուղղությամբ ձգվող 1500-ից մինչև 3000 մ (3200մ) բարձրությունների վրա տեղաբաշխված լեռնային գոտու միջլեռնային գոգավորությունները բնութագրվում են նաև զարգացած գետային դարավանդների տեղանքի 4⁰-ից բարձր թեքություններով: Այդ գոգավորությունները շրջապատող լեռնաշղթաների լանջերը բավականաչափ թեք է 1000-2000 մ-ով և ավելի են բարձրանում դրանց ստորոտի նկատմամբ: Բարձր լեռնաշղթաները զգալիորեն մեղմացնում են տեղումներ առաջացնող օդային հոսանքների ազդեցությունը, այդ պատճառով էլ կլիման այստեղ չորային է, և ոռոգման պայմաններում աճեցնում են

մշակաբույսերը, պտուղներն ու հատապտուղները:

Լեռնային գոտու փակ միջլեռնային գոգավորություններում լավ է արտահայտված հորիզոնական ուղղաձիգ գոտիականությունը, որտեղ գոգավորության հատակի ստորին մասից դեպի վերին մաս և լեռնալանջերի վրա բացարձակ բարձրության ավելացմանը համեմատ դիտվում է հողերի հերթափոխ: Հողերն այստեղ զարգանում են բացառապես լեռնային պայմանների ազդեցության տակ, լեռնային ապարների քայքայման վերանստվածքային արդյունքի վրա: Կուտակվելով գոգավորության հատակին, դրանք նպաստում են հողաձևավորող ապարների վերականգնմանը, առավել ևս ստեղծելով ընդհատուն հողաձևավորող գործընթաց, որը հանգեցնում է տարասեռ մեխանիկական կազմով և հումուսային շերտով շերտավոր և թաղիքավոր հորիզոնների ձևավորմանը:

Բացարձակ բարձրության նկատմամբ միջլեռնային գոգավորությունների բարձրացմանը զուգընթաց 5⁰ և 10⁰ C-ի դրական ջերմաստիճանների գումարից կախված պակասում է աճեցվող մշակաբույսերի, պտուղների և հատապտուղների ընտրությունը: Հետևաբար հողերի օգտագործումը երկրագործության մեջ պետք է լինի խիստ տարբերակված, քանի որ հողային ծածկն այստեղ շատ զգայուն է մարդածին ներգործության նկատմամբ: Հողերի մշակման շուտ տալու գործիքների օգտագործումը հաճախ հանգեցնում է հողային բերրիության անփոխարինելի կորուստների, հողերի ողողամաշվածության ակտիվացմանը:

Փակ միջլեռնային գոգավորություններում անհրաժեշտ է լայնորեն արմատավորել հողերն առանց շուտ տալու վրա հիմնվող երոզիայից հողերի պաշտպանության հուսալի միջոց ծառայող խոտացան և ուրիշ բուսական մնացորդների պահպանությունն ապահովող երկրագործության հողապաշտպան համակարգը:

Յուրօրինակ և ցուրտ կլիմայի մարզերում ու տարածաշրջաններում բացարձակ բարձրության նկատմամբ 3000-4500 մ և ավելի բարձրությունների վրա տեղաբաշխված լեռնաշղթաներին, հրաբխային լեռնավահաններին և սարավանդներին բնորոշ է ռելիեֆի տիպիկ ալպիական ձևերը: Այստեղ խոտհարքերի, իսկ առանձին տեղամասերում խոտացության տակ է ընթանում հողերի յուրացումը: Դրանք աչքի են ընկնում կլիմայի ցամաքայնությամբ, որտեղ ձևավորվում են խճա-շլաքարային, հումուսա-գելացված, թույլ զարգացած և մանրահողային հողերը, որոնք պետք է սահմանափակվեն միայն մակերեսային մշակումով:

Լեռնալանջերի հողերը, դրանք լանջային գործընթացների ազդեցության տակ ձևավորվող լեռնային հողեր են, որտեղ գերակշռում են նյութերի մեխանիկական և գեոքիմիական դուրս բերումը, հողային լուծույթների և հանքային զանգվածների տեղաշարժը, ծանրության ուժի տակ հողածածկի վերականգնումը: Այդ բոլորը նախադրյալներ են ստեղծում սակավահզոր, հաճախ ոչ լրիվ զարգացած կմախքային կտրվածքով գոյացումների համար: Լեռնալանջերի հողերը՝ մարգագետնաարոտային տնտեսության հիմնական հողային ֆոնդն են, նրա բարելավման և

արդյունավետության բարձրացման համար պահանջվում են հատուկ գործելաձևեր:

ՀՀ լեռնային գոտու ցածրադիր և միջին բարձրություններում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների, մասամբ նաև բազմամյա խոտերի հետ զարգացած է անջրդի երկրագործությունը, որտեղ հացահատիկահարուստային ցանքաշրջանառության ֆոնի վրա լանջի երկայնքով անհրաժեշտ է արմատավորել հողերի շերտավոր մշակումը: Հողերի մշակման համակարգն այստեղ պետք է ուղղված լինի հերկելի հորիզոնների պահպանմանը, խոնավության առավելագույն պահպանության արդյունքին հասնելու համար պայմանների ստեղծմանը: Հենց այստեղ հարավային և արևելյան կողմնադրության լանջերի վրա, հիմնականում դրանց ստորին մասերում տեղաբաշխված, դարավանդավորված հողերի վրա զարգացում են ստացել նաև պտղաբուծությունն ու խաղողագործությունը, որտեղ զգալիորեն հզոր են հողերը՝ կոպիճի բավականաչափ խորը տեղադրվածությամբ [4]: Լեռնային այգեգործության ողջ ագրոտեխնիկան ուղղված է հողում խոնավության պահպանմանն և լանջերի վրա ու գետահովիտներում էրոզիոն գործընթացների կանխելուն, լեռնային գետերի հուններում հեղեղատային հոսքերի թուլացմանը:

Այսպիսով, գիտական հաստատությունների տվյալների և առաջավոր փորձի ընդհանրացման հիման վրա լեռնային երկրագործության գոտիական համակարգերի յուրահատկությունների և պայմանների մշակումը դժվարին գործ է: Խնդիրն այն է, որ լեռնային երկրագործության պայմաններում ուժերն անհրաժեշտ է կենտրոնացնել հողերի բերրիությունը բարձրացնելու, էրոզիան կանխելու գիտական հիմունքների մշակման և լեռնային տարածքի գյուղատնտեսական հողատեսքերի ագրոէկոլոգիական վիճակի բարելավման վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մանասյան Մ.Գ. ՀՀ գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման արդյունավետության բարձրացումը հողակտորների մանրաուրվագիծ և անկանոն կառուցվածքի պայմաններում: Բանբեր ՀՊՏՀ-ի 2007, N 2, էջ 90-104:
2. Погосян Д. Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Армянской ССР. Ереван, Изд-во АН Арм. ССР, 1986, էջ 142:
3. Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգի հիմնա-խնդիրները և զարգացման ռազմավարությունը, ՀՀ գյուղնախարարության «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ» տպագրատուն, 2002 400 էջ: Հայաստանի գյուղատնտեսության բնագավառի բարեփոխումների տեսության, ՀԱՄԱՇԽԱՐԻԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, Հայ Էդիթ, 1995, 184 էջ
4. Մանասյան Վ.Գ. Այգեգործության մասնագիտացված գոտիների ձևավորման համար լանջերի և հովիտների ռացիոնալ օգտագործումը ՀՀ-ում, Երկրաբանության և աշխարհագրության գիտական տեղեկագիր, 2017, 51.3, էջ 195-201:

MANASYAN V.G.

SCIENTIFIC BASIS OF MINIG DEVELOPMENT IN RA

The article describes the basic directions of mountainous farming the regular territorial

structure of the soil cover of the Republic of Armenia, which provides a basis for rational allocation of agricultural machinery for cultivation of agricultural crops, their cultivation agrotechnology and lowland, mountainous and mountainous zones based on climatic conditions.
